

քաղոր աշխատություն մեջ գիտականորեն հիմնավորել է զրաբար լեզվից առաջ եղած բարբառների գոյությունը և ցույց տվել, որ զրաբար այդ բարբառներից գոյացել ու զարգացման այդ աստիճանին է հասել երկար ժամանակի ընթացքում: Ուրեմն՝ զրաբարը ի յարդ ի գալի և ի կերպարանս և բերված հայ ինտելիգենցիայի, հայ ժողովրդի բարձր խավերի գործոն մասնակցությամբ՝ երկար տարիներ ընթացյալ: Հինգերորդ դարում այդ լեզուն արդեն իր զարգացման բարձրագույն կետի վրա էր գտնվում: Վեր մատենագիրները որևէ նոր ձև չտվին նրան, այլ զրի անցկացրին այնպես, ինչպես կար և գործածվում էր հայ ժողովրդի մի զգալի հատվածի կողմից:

Սակայն որ ժամանակից էր սկսված այդ լեզվի մշակումը, երբ են գոյացել նրա ընդհանուր իրողությունները: Այլ խոսքով՝ երբ է կազմավորվել զրաբարը: Մենք այս հոգիվածով վերձում ենք շոշափել այդ հարցերը և հետագայի ուսումնասիրողների ուշագրությունը դարձնել այդ կարևոր պրոբլեմի վրա, որի վերջնական լուծումը կպարզի մեր կուլտուրայի պատմության մի կարևոր և ուշագրավ հարց էս: Հայ ժողովրդի և հայ լեզվի առաջացման մասին հնագույն հիշատակություններում իրարամերձ կարծիքներ են եղել: Հերոդոտը հայերին և հայոց լեզուն փոյուզացիներին, իսկ Ստրաբոնը արամեական ցեղերի հետ են կապում: Ի՞նչ հայերենի փոյուզական շերտի տակ հասկանանք հնդեվրոպական շերտը, Հերոդոտի կարծիքը թերևս փշտ լինի, որովհետև հայերենում, թեև քիչ քանակությամբ, բայց այնուամենայնիվ հնդեվրոպական տարրեր կան: Սակայն հայերենը ամենից առաջ կապվում և ընդի ժողովուրդների, ինչպես նաև սեմական սիստեմի լեզուների հետ: Հայոց լեզուն զրի անցկացվելուց շատ առաջ բազմաթիվ անգամ խաչավորված ու զարգացման մի շարք ստադիաներ անցած լեզու է եղել: Նա մեր էրայից դեռևս առաջ լեզուների հարեթական ստադիայից հնդեվրոպական ստադիան անցնող լեզու էր: Ոչ միայն այդ հայերենը գոյանում է պատմական այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հնդեվրոպական շերտը արդեն որպես ընդի ժողովուրդների լեզվական իրողություն է հանդես գալիս և հայոց լեզվին է անցնում իրեն ընդի լեզուներից հայերենին անցած լեզվական իրողություն:

Հայաստանում հայ ժողովրդի պետականության ստեղծումը ուժեղացնում է տարբեր ցեղերի և նախարարական տների լեզուների միջև գոյացող ընդհանրությունների պրոցեսը այնքան, որ Տիգրան Մեծի ժամանակ արդեն ընդհանուր լեզվի գոյության մասին են հիշատակում օտար աղբյուրները: Ն. Ադոնցը իր «Армения в эпоху Юстиниана» արժեքավոր հետազոտության մեջ ասում է, թե Հայաստանում «Ժողովուրդների ասիմիլացիան շարունակվել է մինչև Ջարեհն ու Արտաշեսը, երբ և ավարտվել է երկրի հայացման կարևոր պերիոդներից մեկը»:

Տիգրան Մեծի տերության առաջացման նախօրյակին ցեղային տարբերություններն արդեն այնքան էին վերացել, որ ամբողջ բնակչությունը խոսում էր միևնույն ընդհանուր լեզվով: Ադոնցի վերջին պնդումը, որը հիմնված է Ստրաբոնի տեղեկությունների վրա, չպետք է բացարձակորեն հասկանալ: Հայաստանի նման մի երկրում, ուր բազմաթիվ ցեղեր են ապ-

¹ Н. Адонц — Армения в эпоху Юстиниана, стр. 399.

րել, մեղնից ավելի քան քսան դար առաջ չէր կարող մի ընդհանուր լեզու իշխել։ Սակայն այդ լեզուների միջև այն ժամանակ արդեն զոյացել էին այնպիսի ընդհանրություններ, որ՝ օտարները, կամ այդ լեզուներին քիչ ծանոթ մարդիկ, չէին կարող տեսնել դրանց տարբերությունները։

Այդ ընդհանրություններն ավելի խորանում ու ընդարձակվում են Տիգրան Երկրորդի տիրապետության շրջանում, որովհետև այդ ժամանակ ավելի սերտ է դառնում հայ նախարարների կապը, և ստեղծվում է ուժեղ՝ հայ ժողովրդի զանազան հատվածներից մի ամբողջական միություն՝ ստեղծելու ընդունակ և աշխարհը սարսափեցնող հզոր պետություն, որի իշխանության ներքո Հայաստանում ավարտվում են տոհմատիրական հարաբերությունների վերացման պրոցեսն ու ժողովրդական ուժերի ինտեգրացիան, հասարակական այդ տեղաշարժները պարզելու համար՝ Ն. Ադոնցը իր վերոհիշյալ գրքում վերլուծում է հայ նախարարական տների հետ կապված մի շարք տերմիններ, որոնք մասամբ կարող են լույս սփռել նաև զրաբար լեզվի կազմավորման հարցերի պարզման վրա։ Այդ տերմիններից առաջին հերթին կարելի է նշել մաղխազ, ասպետ և տեր, որոնք կապված են տոհմատիրական շրջանի սովորությունների հետ և լեզվական ձևավորում ստացել են Տիգրան Բ-ի տիրապետությունից զուտ շատ առաջ։

Այդ տերմիններից մաղխազը *Քոռնոտներ*ի նախարարական առնձի հետ է կապվում և ծագում է ասորական malxazu բառից, նշանակում է ընդհանրապես տիրուղ, իշխան, քաղալար։ Հետազոյում մասամբ փոխվում է այդ տերմինի իմաստը և թվագլորի պահպանների ղեկավորը՝ առուժն է ստանում։ Բայց այդ պաշտոնը ժառանգաբար կատարում էին նախարարական որոշ տներից սերվածները։ Մաղխազությունը վերապահված էր Քոռնոտենյաց նախարարական տոհմին, որի ներկայացուցիչը արքունիքի թիկնապահ զորքի հրամանատարն էր լինում։ Ազաթանդեղոսի մոտ ունենք «Հայ նախարարական Մաղխազունաց տան պաշտոն» արտահայտությունը։ Այդ տերմինի համապատասխան, բայց ավելի սահմանափակ և նեղ չափով ենթակայություն արտահայտող տերմին է նաև Թղխ բառը, որը ծագում է փոքր-ասիական alx, halx արմատից և նշանակում է կախ-կախախի, ունեցած-չունեցածը, վաղանք, սղակ, վաճառքի բեռներ, նաև՝ տուն, անբախ և այլն։ Այս բառից էլ առաջացել է աղախին հասկացությունն ու բառը։ Հետևապես տոհմատիրական հասարակության շրջանում, երբ կինը դառնում է տանտիրոջ սեփականությունը և կապվում է տան հետ, ստանում է «ծառայի» հոմանիշ՝ աղախին անունը։ Այդ փոխանցումը մենք նկատում ենք նաև վրացերենում։

Նույն բառարմատից կազմված վրացերեն moaxle բառը նույնպես նշանակում է աղախին։ Հին Հայաստանում ընդթմին տերմինը ևս կապված լինելով տոհմատիրական հարաբերությունների հետ՝ համարյա թե հասարակական նման ֆունկցիա ու գեր է ունեցել։ Այդ բառի լեզվաբանական զուգահեռներ կան մի շարք այլ լեզուներում։ Հին հուռնական domi natus տերմինով անվանվում էին տիրոջ տանը ծնված ստրուկները, հունարեն δόμογενής բառը նշանակում է տնային և այլն։ Հայերեն ընդոմին բառը բարդված է ընդ և ծին արմատներից, որոնց մեջ ծինը համապատասխանում է հունական genos, լատիներեն gens բառերին, որոնք նշանակել են նաև տոհմ. այդ իմաստից ելնելով՝ պետք է ենթադրել, որ հայերեն ծին բառը

շատ հին ծագում ունի և սկզբնական շրջանում նշանակել է տոհմ. ուրե՞նք՝ ընդծին նշանակում է տոհմին պատկանող անձը, որը զտարյուն չէ, բայց ծնվել ու մնվել է տիրոջ տանը և դարձել է տոհմին պատկանող: Այդ իմաստով նույն բառը գործածել են մեր մատենագիրները. Մ. Պորենացին պատմում է, թե շաշկը մտավ Արարատյան երկիրը՝ հանգերձ որդւովք իւրովք և զստեքօք և որդւոց որդւովք, արամբք զորաւորօք՝ թուով իրբև երեքհարիւր և այլովք ընդոծինօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղխւեա (Մ. Պոր., գ. Ա, գլխ. Ժ, էջ 35):

«Ասպետ» տերմինը Բագրատունյաց տոհմի հատուկ տիտղոսն է և նշանակում է տոհմապետ. համապատասխանում է իրանական viθapati բառին: Այդ տերմինը ստուգաբանելու համար Ադոնցը այն համեմատում է նախարարական կենցաղի հետ կապված մի այլ տերմինի՝ սեպուե բառի հետ, որը. Մառի ստուգաբանության համաձայն, առաջացել է իրանական viθaputhra բառից, որի մեջ puθra—պուհ նշանակում է որդի, իսկ viθ կամ viso տուն (իշխանական): Անառյանը նույնպես ընդունում է սեպուե տերմինի այդ ստուգաբանությունը. «Հայերենը,—ասում է նա,—ենթադրում է իրան. *visya-puθra, որի մեջ բարդության իրը առաջին եզր դրված է զոյականի տեղ ածականը, որից վսեպուրեք>վոնպուե և վ-ի անկումով՝ սեպուր»՝ սեպուե» (տես Արմ. բառ.): Սեպուե տերմինը, Ադոնցի կարծիքով, պահպանվել է հայոց լեզվում նաև Ասպուրակ ձևով. այդ ցույց է տալիս, որ հիշատակված բառերի as (աս) և se (սե) սկզբնավանկերը միևնույն բառի տարբերակներն են. ուրե՞նք՝ ասպետ տերմինի առաջին եզրը՝ աս-ը կարելի է համարել vid բառի տարբերակը, և եթե այդ ստույգ է, ասքա՝ ասպետ բառը բարդված է vid կամ viso և pati բառերից, որի մեջ vid> viso նշանակում է տուն, տոհմ, իսկ pati՝ պետ: Անառյանը ասպետ տերմինը կապում է իրանական aspapatl փաթտի (aspa—ձի, pati—տեր) բառի հետ: Բայց այստեղ կարևորը ոչ թե այդ տերմինի ստուգաբանությունը, այլ նրա իմաստային նրանգավորումներն են. իր տոհմապետ առումով այդ տերմինը կապվում է այն ժամանակաշրջանի հետ, երբ դեռևս հայերը տոհմատիրական հարաբերությունների մնացորդները պահպանում էին, հետևաբար՝ շատ հին կազմություն ունի:

Տոհմային հասարակակարգի արխայիկ ֆորմացիայի հետ են կապվում տանուտեր, տեր տերմինները, որոնցից առաջինը բարդված է տուն և տեր բառերից: Այդ տերմինի առաջին եզրը՝ տուն-ը նշանակել է տոհմ, իսկ տեր-ը տոհմի գավաղձ, գլուխձ, հիշխանձ, զնահապետձ: Այդ բառերից հետագործբրական կազմություն ունեն տեր և մանապետ տերմինները. տեր-ը բարդված է տի և այլ բառերից, որոնցից երկրորդը շատ հասկանալի է, իսկ առաջին բառը տի-ն դեռևս ստուգաբանված չէ՝ ն. Ադոնցը այդ բառը կապում է հնդեվրոպական di- արմատի հետ, որովհետև ինչպես di>deus, նույնպես և տի- նշանակել են գաստվածձ, իսկ հետագայում այդ բառերով կոչել են թագավորին և ընդհանրապես հողատիրոջը. բայց հայերեն տեր (տի-այր) բառը իր կազմությամբ առաջին հերթին կապվում է րնիկ ժողովուրդների լեզվասխտեմի հետ. այդ ձևով է կազմված նաև վրացերեն mepe բառը, որը կազմված է mama և upali բառերից, որոնց մեջ upali նշանակում է տեր, իշխող, իսկ սեմիտական որոշ լեզուներում նաև ցեղը պաշտպանող աստված, որն անցել է վրացերենին հոդատեր, քազավար

առումով. իսկ առաջին եզրը նշանակում է հայր: Տաճուտեր և տեր բառերն ավելի հին կազմություն ունեն, քան նախապես տերմինը, որը հայերենի մեջ մասն է պարթևներից և համապատասխանում է պարթ. nafapañi ձևին, որը կազմված է nafā «պորտ, ցեղ» և pañi «պետ» բառերից: Այդ բառի առաջին եզրը nafā բառը պահպանված է նաև հայ ֆեոդալական հարաբերությունների հետ կապված մի այլ բառի՝ նախարար տերմինի մեջ: Նախարար բառի ստուգաբանության ու ծագման հարցի նկատմամբ ճիշտ մոտեցում ցուցաբերեց Ն. Մառը, որը մերժելով մինչ այդ եղած ստուգաբանությունները, մատնանշեց, որ այդ բառի սկզբնական ձևը պետք է լինի նախարար: Մառի այդ ստուգաբանությունը հետագայում ավելի ճշտեց Ն. Աղոնցը. իսկ պրոֆ. Մեյեն սողզերեն լեզվի օգնությամբ հաստատեց նրանց ենթադրությունը և տվեց այդ բառի ստուգաբանությունը՝ նոր գտնված փաստերի օգնությամբ: Նա ցույց տվեց, որ այդ բառը nafōar ձևով պահպանված է սողզերենում՝ «ժողովրդի կամ ցեղի պետ» նշանակությամբ և կազմված է nafā «պորտ, ցեղ» և ōar «պետ, գլխավոր» բառերից: Հայերենում սախարար-ը ժողովրդական լեզվի արտասանությամբ դարձել է նախարար:

Մեր առաջ դրված հարցերը պարզելու տեսակետից ուշագրավ է նաև մարդպետ տերմինի վերլուծությունը: Այդ բառը, ինչպես ցույց է տվել Ն. Աղոնցը, կազմված է մարդ և պետ բառերից և սկզբում նշանակել է «մարդ» ցեղի պետ. հետագայում մարդ պետ տերմինը դարձել է նախարարական տոհմի տիտղոս: Մարդերը հայ պետական կյանքում մեծ դեր են կատարել: Պլուտարքոսի պատմածի համաձայն Տիգրան Նրկրորդը Լուկուլլոսի դեմ հանում է բազմաթիվ հեծյալներ, որոնց առաջից գնում էին հեծյալ նետաձիգ մարդերը և նիզակակիր իրենները. նրանց վրա էր զրել իր հույսը հայ թագավորը: Մարդերը եղել էին քոչվորական ցեղեր, որոնք մեր էրայից մի դար առաջ արդեն հայացել և բնակություն էին հաստատել Հայկական բարձրավանդակում: Այդ մարդերից է սկիզբ առնում նախարարական այն հայ տունը, որի ղեկավարներն իրենց կոչում էին մարդպետ: Այդ տերմինը նույն արտասանությամբ հիշատակում են Ստրաբոնը, Պլուտարքոսը, Գեսենոֆոնը և օտար այլ աղբյուրներ:

Այդ տերմինները, Ն. Աղոնցի կարծիքով՝ վերցված են նախարարական շրջանից և տոհմատիրական կարգերի հնագույն շրջանի մնացորդներ են: Դրանք տեղական այն անուններից են, որոնք կրել են կոմարիները: Տերմինների այդ բազմազանությունը ցույց է տալիս, որ հայ էթնոսը մի շարք ցեղերից պատմականորեն դոյացած ընդհանրություն է, որը մեր էրայից մեկ-երկու դար առաջ այնքան միաձուլվել ու ամուր էր, որ կարողանում է ստեղծել և պահպանել Տիգրան Նրկրորդի պետության նման հզոր պետություն: Հայաստանի քաղաքական հզորությունը Տիգրան Նրկրորդի ժամանակ և Տիգրանի հսկայական նվաճումները առաջին հերթին պայմանավորված էին երկրի ներսում ստեղծված միասնականությամբ և հայ ժողովրդի զանազան հատվածների սերտ համագործակցությամբ: Այդ ընդհանրություններն ու միասնականությունը արտահայտվել են ոչ միայն հայ ժողովրդի քաղաքական, այլ և կուլտուրական կյանքում, և առաջին հերթին լեզվում: Լեզվական ընդհանրությունները միայն նշված տերմիններով չեն սահմանափակվում: Հիշատակված տերմինների մանրամասն

թվարկումը մենք կատարեցինք միայն այն պատճառով, որ ցույց տանք մեր էրայից երկու-երեք դար առաջ հայ ժողովրդի կուլտուրայի և լեզվի զարգացման ու մշակման համար ստեղծված նպաստավոր պայմանները:

Լեզվի ճկունությունն ու զարգանալու հեռանկարները երեւում են նաև տվյալ լեզվի մեջ մտած և յուրացված ոտար բառերի քանակությունից: Որն է լեզու կարող է միայն այն՝ ժամանակ կնքել օտար փոխառություններ, երբ կենսունակ է, զարգանալու մեծ հեռանկարներ ունի: Այդ տեսակետից հայոց լեզուն վերին աստիճանի հետաքրքրական և ուշադրության արժանի կողմեր ունի: Մեր էրայից մի քանի դար առաջ հայոց լեզուն զարգացման այնպիսի աստիճանի վրա է կանգնած, եղել, որ կարողացել է փոխառնել և յուրացնել, հայացնել բազմաթիվ օտար բառեր. այդ փոխառությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն իրաներենից մեր լեզվին անցած բառերը:

Հայերն ու պարսիկները ավելի քան 16 դար միմյանց հարևան են եղել: Այդ ժամանակաշրջանի կեսից ավելի հայերը գտնվել են պարսկական տիրապետության տակ, կամ պարսից գերիշխանության ներքո կաղմել են վասալական պետություններ: Հայաստանի դահակալները հաճախ եղել են պարսիկներ, որոնցից շատերը իրենց ընտանիքով բնակություն հաստատելով Հայաստանում՝ ենթարկվել են հայոց ազդեցությանը և հայացել: Այդ ընդարձակ հարաբերության հետևանքով հայերն ու պարսիկները փոխադարձաբար ազդել են միմյանց սովորությունների, կուլտուրայի ու լեզվի վրա:

Մինչև այժմ իշխել է այն կարծիքը, որ իբր թե միայն հայերն են ազդվել պարսիկներից և, որ հայերենում ու պարսկերենում եղած ընդհանուր բառերը պարսկերենից են անցել հայերենին, սակայն այդ կարծիքը անվերապահորեն ճիշտ համարել չի կարելի. հենց այն հանգամանքը, որ պարսիկներից որոշ ցեղեր, առանձին նախարարական տնիք հայացել են, ցույց է տալիս, որ նրանք նույնպես ենթարկվել են հայերի ազդեցությանը և առանձին դեպքերում ավելի ուժեղ, քան հայերը, որոնք ընդունելով օտար կուլտուրան ու լեզվական իրողությունները՝ կարողացել են սեփականացնել դրանք՝ միշտ պահելով հայերին բնորոշը: Այդ բանը երևում է նույնիսկ այն բառերում, որոնք փոխ են առել հայերը պարսիկներից: Օրինակ՝ աշխաթե բառը պարսկերենից է անցել մեր լեզվին. այդ բառի հնագույն ձևն է xšadra, որը պարթևական պահլավերենի ժամանակ դարձել է xšair, ապա՝ xsahr, իսկ սասանյան պահլավերենում՝ šair, sahr:

Հայերը այդ բառը փոխ են առել Արշակունյաց ժամանակ և ենթարկելով հայերենի հնչյունական օրենքներին՝ բառին աշխաթե ձևն են ավել:

Պարսկերեն երիտասարդ բառը նույնպես մեր լեզվի մեջ մտել է արշակունյաց շրջանում, կազմված է պհլ. rēlak (երիտասարդ, պատանի) և sarā (տարի) բառերից: Պհլ. այդ բառը հայերը վերցնելով, իրենց արտասանական բաղադրին համապատասխան ձև են տվել՝ բառասկզբում ր-ից առաջ և ավելացնելով հայերենը հնում ր-ով սկսվող բառ չի պահել. բոլոր այն դեպքերում, երբ ր-ով սկսվող բառ են փոխ առել հայերը, ր-ից առաջ որն է ձայնավոր են ավելացրել: Այդ երևույթը նկատվել է նաև բնիկ մի շարք այլ ժողովուրդների լեզուներում:

Սրապատ, առաքան բառերը իրաներեն են. հայերը դործածել են արշա-

կուռյաց զինաստիայի շրջանից սկսած. ծաղոււմ է պհլ. rasan «չվան» բառից, որը հնում ունեցել է նաև «սանձ» նշանակութիւնը, որը չի պահպանված իրաներենում, Այդ բառի մի այլ տարբերակը երասան, երասանակ բառն է, որը պահել է իրաներենում կորած նշանակութիւնը, Այս բառերը, նախորդներին նման, հայոց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկվելով՝ ամբողջապես հայկական են դարձել մեր էրայից առաջ, Պարսկերենից հայերենին անցած և ամբողջապես յուրացված այդպիսի բառերի թիվը, Աճառյանի հաշվումով, հասնում է 1405-ի, որոնցից 400-ը ավելի ուշ շրջանում են մտել մեր լեզվի մեջ, իսկ մնացածը այնքան հին պատմութիւն ունեն, որ իրենց ձևով ժամանակակից պարսկերենը չեն հիշեցնում, Այդ բառերի մեջ կան շատ բառեր, որոնք չեն պահպանված պարսկերենում, օրինակ՝ ազգ, այգ, ախտ, ահեկան, ամիճ, անագարմ (վայրենի), անարի (անճոռնի), անպամ, աշխատել, աշտիայ, ապահարդան, ապաշաւ, ապարանք, ապշուպ, ապուխտ, ապուռ, ուպուպարել, ապստամբ, առոյգ, առակ (կարող), առուռչան, արադ, արկանել, արշաւ, աւագան, աւան, աւար, աւարտ, բազ (բաժին, աստված), բազոււմ, բաժակ, բամբիշ (թաղուհի), բարարան, բղեշխ, բեհեդ, բոյժ, բոշխնիլ, գումարտակ, դաստակերտ, դարան, դարակել (ըմբռնել), դենպետ, դեսպակ, դեսպան, դերձակ, դերձան, դմկերպ (սպեղ), դրուժան (խարերա), դոհ, իշխել, խոսպետ (իշխան), կախարդ, կախարդասար, կամայ, կար, կարմիր, կերպ, կշտապանակ (դարդ), կուլ (կատու), համարակար (հաշվապահ), համհարդ, հանդարտ, հանդերձ, հանդէս, հարագատ, հարակաշ, հարեան, հոօր, հէն, հրաշք, հրապարակ, հրաւէր, հրովարտակ, մատեան, մարգար (ամսի 4-ը), մարգաց (ամիս), միշտ, մոյկ (կոշիկ), յաշտ, յանդիման, նոզվ, նմդեհ, նիրհել, նկան, նուէր, նպաստ, ռահապետ, շամբուշ (խենթ), պարտ, պսակ, սով, վահան, վանել, վանք (վան), վաշխ, վաշտ, վասն, վերմակ, վէմ, վիճակ, վիշապ, վին (քնար), վիրալ (սափրել), վիշտ, վկայ, վկանտել (նվաճել), վտակ, տատրակ, տար (հեռու), փալթում, քուրձ, օշինդը, օտար, օրէնք, սրինակ և այլն, Այս բառերը իրենց ձևով հիշեցնում են պահլավերեն կամ գենդերեն համապատասխան բառեր, սակայն միևնույն ժամանակ զգալի տարբերութիւն ունեն այդ բառերից և այնքան են հարազատ հայերին, որ նրանց օտար լինելու հանգամանքը խիստ կասկածելի է դառնում, Հավանական է, որ դրանց մի մասը հայերենից է անցել այդ լեզուներին, իսկ մի մասն էլ և՛ հայերը, և՛ հին պարսիկները ժառանգել են այն բնիկ ժողովուրդներից, որոնք շփվել են հայերի և պարսիկների հետ, Համեմայն դեպի այդ բառերը շատ հին պատմութիւն ունեն և խոսում են հին հայոց լեզվի մշակվածութեան ու զարգացած լինելու մասին, Դրանց որոշ մասը անանցված ու բարդված է միայն հայերենին հատուկ օրինաչափութիւններով:

Ահա մի քանիսը.

Ապարաւմ. մեր մատենադիրները գործածել են մեծ մասամբ անեղարձ, օմեժ տուն, պալատ, իշխանական տուն» նշանակութեամբ, Հր. Աճառյանի կարծիքով՝ բառի ուղիղ մեկնութիւնը տվել է Մառը, Այդ մեկնութեան համաձայն, բառ կազմված է հին սլաւոններէն аѣа մասնիկով՝ аѣа «կատուցել, շինել» արմատից, որը չի պահված իրանյան ուրիշ լեզուների մեջ, Ասորերեն aīdāna և երբայերեն aīeden «պալատ, ապարանք» բառերը կապվում են հիշյալ տերմինի հետ և վկայում են դրա հնութիւնը, Այդ

թաոՐ հայերենի մեջ է մտել շատ հնուց և մեր էրայից առաջ, հայոց լեզվի օրինաչափություններին ենթարկվելով՝ ընդունել է նաև Բ հոգնակի վերջավորությունը, որը իբրեւ հոգնակի վերջավորություն այդ բառի մեջ չի դիտակցվել, երբ դրի է անցկացվել հայոց լեզուն։

Ապուխտ. կազմված է պահլավերեն apuxt «անեփ, չեփած» բառից, որի մեջ a բացասական մասնիկ է, իսկ puxt նշանակում է «եփած»։ Հայերեն ապուխտ բառը պահլավերենի համեմատությամբ որոշ իմաստային տարբերություն ունի, ըստ Հայկազյան բառարանի՝ «ազած ու բաց օդում չորացրած միս», «բաստրմա»։ Այդ բառը գործածվում է մեր միշտ բարբառներում. հայերենից անցել է վրացերենին, Ավելի ուշ շրջանում լեհերը փոխ են առել հայերենից՝ փոխելով պ-ն ք-ով՝ լեհահայերի արտասանություն համաձայն, Բառի ընդարձակ գործածությունը հայերի մեջ կապվում է մսի մշակման հնազույն եղանակի հետ, որն ըստ երևույթին հատուկ է եղել հին հայերին։ Այդ բառը բարբառներում «չորացած» իմաստով էլ է գործածվում։ Պարսկերենում այդ բառը՝ հայերեն ապուխտ իմաստով չի պահված։

Ատրուշան. կապվում է հին պաշտամունքի հետ. բարդված է պահլավերեն Վերան Վերաք և շան մինչև այժմ չմեկնված բառարմատներից. նշանակում է «կրակատուն արևապաշտների»։ Բառի երկրորդ եզրի մեկնություն մասին կան մի շարք կարծիքներ, որոնցից և ոչ մեկը ստույգ չի համարված։ Շատ հավանական է, որ շան բառը Հայկական բարձրավանդակում ապրած բնիկ ժողովուրդների որևէ լեզվից է փնացել հայոց մեջ, կամ հենց հայերեն բառ է, որը բարդվելով պահլավերեն ատուր բառի հետ, վերջինի ը դրափոխությունով՝ ձևացրել է ատրուշան բառը։ Մական ինչ ձևով և ինչ ճանապարհով կազմված կամ եկած լինի այդ բառը, այնուամենայնիվ դարերի հնություն ունի և բացատրվում է միայն հայերենի իրողություններով։

Իշխան բառը եթե ընդունենք, որ իրաներենից է մտել մեր լեզվի մեջ, այնպիսի ձևափոխման է ենթարկված, որ միայն մասնագիտական հետազոտությամբ կարելի է վերականգնել նրա սկզբնական դրությունը։ Իսթա կապվում է ղենդերեն xsi «իշխել, տիրել, զօրել, կարենալ» բայարմատի հետ։ Հ. Աճառյանը ենթադրում է, որ հայերենում իրանական xs դարձել է ըստ օրինի շխ, և քանի որ հայերենի մեջ շխ հնչյունախմբով սկսվող բառ չկա, ուստի ավելացել է ֆ հնչյունը, որը հաջորդ շ-ի ազդեցությամբ դարձել է ֆ. ապա, հայոց լեզվի հնչյունափոխության համաձայն՝ ֆ, և բառը ստացել է ֆշխել ձևը (եշխել>էշխել>իշխել)։ Մական այդ արմատը կա նաև խեթերենում isha (=išxa) «տեր» իմաստով։ Այդ բառը, ինչպես հավաստում է Եր. Ղափանցյանը, կա նաև սումերերենում և այլ լեզուներում։ Այս բոլորը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ բառս շատ հնուց է գալիս և հայերի կազմավորումից առաջ էլ գործածվել է հայերին նախորդող ժողովուրդների կամ ցեղերի լեզուներում, որոնք հետագայում հայերենի մեջ են մտել որպես նրա բազկացուցիչ մասը և ոչ թե իբրեւ փոխառություն։

Կախարդ. հայերենում ընդարձակ գործածություն ունի։ Համարվում է իրաներենից փոխառված բառ. բայց իրանական ոչ մի լեզվում պահված չէ։ Զենդերենում կա kaxvarðā «կախարդ» բառը, որ եթե հայերը փոխ առնեին, պետք է օ-ն տառադարձեին ր, իսկ v-ն վ կամ ւ։

Ն. Մառի ստուգաբանությամբ բառս ածանցավոր բառ է, որի մեջ կա

նախամասնիկ է, իսկ խարդ՝ բառարմատ: Մառի այդ ենթադրությունը ճշգրտում է մի շարք այլ փաստերով: Մենք ունենք խարդ-ախ բառը, որի մեջ ախ-ը վերջածանց է, որը պատահում է հայերեն մի շարք այլ բառերում: Ինչպես՝ փար-ախ, յան-ախ, շաղ-ախ, թիր-ախ, խր-ախ, ուր-ախ, խր-ախ-նան, թերևս խիղ-ախ և այլն: Ախ վերջածանցը պահված է նաև Կովկասյան լեզուներում, հետևաբար՝ խարդախ, կախարդ, ինչպես նաև կախարդասար բառերը իրաներենի միջոցով մոկենելը ստույգ չի կարող լինել: Դրանք ամենից առաջ հայերեն են և ձևավորվել են հայերենի օրենքների համաձայն: Մենք անընդհատ կարող ենք բաղմացնել նման օրինակներ: Սակայն բերածներն էլ բավական են հայոց լեզվի հնությունն ու կառուցվածքը, ինչպես նաև հարստությունն ու օտար բառեր յուրացնելու կարողությունը ցույց տալու համար:

Պարսկերենից մեր լեզվին անցած բառերի զերակշիշ մեծամասնությունը, ինչպես նշեցինք վերևում, շատ հին պատմություն ունի: Դրանք պահպանված կամ հին պարսկերեն բառեր են: Իսկ հին պարսկերենը Կյուրոսների և Դարեհների ժամանակաշրջանի լեզուն է, որը պահպանված է Պերսեպոլիսի և մի քանի այլ բնակավայրերում պահպանված մեջ, որոնք գրված են մեր թվականությունից առաջ՝ 560—330 թվերին:

Պահպանված կամ միջին պարսկերենը նույնպես հնագույն լեզուներից է: Պահպանված բառերում է երկու շրջանի՝ Արշակունյաց պահլավերեն (կոչվում է նաև ինճ կամ պարթևական պահլավերեն), որն ընդգրկում է մեր էրայից առաջ 256-ից մինչև մեր թվականության 226 թվերի մեջն ընկած ժամանակաշրջանը, և սասանյան կամ նոր պահլավերեն, որը սլաքից Սասանյան հարստության ժամանակի լեզուն է և ընդգրկում է ավելի քան չորս դար՝ 226—642 թվերը: Հայոց լեզուն ավելի շատ փոխառություն է կատարել հին պարսկերենից և Արշակունյաց պահլավերենից:

Սակայն ոչ միայն պարսկերենից, այլև մի շարք այլ ժողովուրդների լեզուներից հայերը մեր էրայից շատ առաջ կնքել են զանազան փոխառություններ, որոնք խոսում են այն ընդարձակ հարաբերությունների մասին, որ ունեն հայերը հարևան ժողովուրդների հետ: Այդ լեզուներից կարելի է նշել խեթերենը, խալդերենը, ասուրերենը, հումայերենը և այլ լեզուներ, որոնք մեր էրայից առաջ մեռած կամ համարյա թե մեռած լեզուներ էին: Հայերը եղել են հնագույն այն ժողովուրդներից, որոնք հարաբերության մեջ մտնելով ժամանակի կուլտուրական ցեղերի և ժողովուրդների հետ՝ կարողացել են յուրացնել նրանց ստեղծած կուլտուրական նոր արժեքները: Մեր էրայից դեռ շատ առաջ հայերը ասուրներից ընդունելով և սեփականելով ասուրաբարելական քաղաքակրթության խոշորագույն գյուտերից մեկը՝ կնքելով գրությունները վավերացնելու սովորությունը, վերցրին նաև այդ սովորության հետ առնչվող ասուրական kunukku «կնիք», kaniku «կնքված բան» բառը, որը հայերենի միջոցով անցնելով թուրքերենին և թուրքերենից թաթարացելով ուղղորդֆինական և սլավոնական աշխարհը տալիս է ուսերեն ԿНИГА «գիրք» բառը:

Հոսմեական կուլտուրան մեծ ազդեցություն է ունեցել շատ ժողովուրդների վրա: Հոսմեական բանակը, որ երկրում եղել է, խոր հետքեր է թողել այդտեղ: Հոսմեական ազդեցությանը ենթարկվելով՝ Ֆրանսիայի,

Փորթուգալիայի, Իսպանիայի, Բելգիայի ժողովուրդները համարյա թե փոխել են իրենց լեզուները. նույնիսկ հունարենը, որը շատ ըմբոստ է եղել օտար փոխառությունների դեմ, Հռոմեական կայսրության ժամանակ լատիներենից վերցրել է մի շարք բառեր, որոնց համարժեքը ունեցել է նաև Հայերն ու հոմալեզուները նույնպես երկար ժամանակ հարաբերության մեջ են եղել միմյանց հետ։ Մեր էրայից երկու դար առաջ Ջարեհն ու Արտաշեսը բանակցությունների մեջ են մտնում հոմալեզուների հետ և ստանալով նրանց օժանդակությունը՝ Հայաստանը անկախ են համարում։ Հռոմեական բանակը այնուհետև շատ հաճախ է ստիպված եղել նստելու Հայաստանում կամ կռվելու հայերի դեմ։ Սակայն այդ բոլոր դեպքերումն էլ հռոմեական ազդեցությունը հայերի վրա այնքան զգալի չի եղել։ Ակուզեմքիս Հ. Աճառյանի հաշվառումով՝ հոմալեզուներից հայերին են անցել հնագույն շրջանում ընդամենը ինը բառ, թեև հայերի և հոմալեզուների փոխադարձ շփումն ու նրանց մեջ ոտնդժված քաղաքական ու տնտեսական հարաբերությունները տեղում են ավելի քան 400 տարի։ Այդ բառերն են՝ կայսր, արկղ, սվուսուղ, սիտղ, դոյլ, կառք, դեմքակ (գոդնոց), բաստեռն, լկտիք (դահալորակ), մարգարիտ, որոնցից յուրաքանչյուրը հասարակական նոր երևույթի կամ ուղղություն հետ է կապված։ Ինչ՞ե՞ն հայերենը հռոմեական լեզվի ազդեցությանը չի ենթարկվել այնպես և այն չափով, ինչպես և ինչ չափով այդ լեզվի ներգործությանն են ենթարկվել հվերպական մի շարք ժողովուրդների լեզուները։ Դրա պատճառը առաջին հերթին հայերենի մշակվածությունն է եղել։ հայերենը մեր էրայից մոտավորապես երկու դար առաջ, այսինքն՝ մոտավորապես այն ժամանակ, երբ առաջին անգամ հոմալեզուների և հայերի միջև սերտ հարաբերություններ են սկզբնավորվում, արդեն վերջնականապես ձևավորված, իր նախնական աստիճանից բարձրացած և պաշտոնական, իշխող դասի կողմից ճանաչվող լեզու դառնալու առիճանին էր հասել։ Այդ է պատճառը, որ այդ ժամանակ հայերենի մեջ մտնում էին միայն այն բառերը, որոնք քաղաքական առանձին հասկացությունների, կամ կուլտուրական նոր մշակույթների հետ էին կապված։ Այդպես է եղել նաև հռոմեական լեզվի նկատմամբ։ Այդ պատճառից բացի, իհարկե, կային նաև այլ պատճառներ, սակայն դրանք երկրորդական էին։ Այլ է հայերի և Հայկական բարձրախնդակում ապրած այլ բնիկ ժողովուրդների լեզուների միջև եղած կապը, այդ լեզուների միջև ոտնդժված ընդհանրությունները բավականաչափ զգալի են և բազմապիսի, որովհետև ձևացել են այնպիսի մի ժամանակ, երբ նոր էին կազմավորվում ժողովուրդներից շատերը, երբ ժողովուրդների ասիմիլացիան և փոխադարձ խաչավորումը գեոևս չէին ավարտված։ Այդ պատճառով էլ ոչ միայն հայերն են փոխ առել այդ ժողովուրդների լեզուներից բազմաթիվ բառեր, այլև այդ ժողովուրդները հայերից ծառանդել են շատ կուլտուրական սովորություններն ու բառեր։ որոնց մի մասը անհետ կորել է, իսկ մի զգալի մասն էլ գեոևս վերջնականապես չի ձշտված ու լրիվ չափով չի մեկնարանված։

Արդյոք միայն նշված փաստերը բավականաչափ հաստատուն կովանենի չեն հայոց լեզվի մշակվածությունը ցույց տալու համար։ Այդ փաստերին անհրաժեշտ է ավելացնել նաև լեզվական այլ իրողություններ, որոնք կարող են մեծ չափով պարզել մեզ հետաքրքրող հարցը։ Դրանցից

ամենից առաջ նշենք գրաբարին առանձնահատուկ իրակություններից մեկը՝ հոգնակիների կազմությունը. գրաբարում բնդհանրացած են հոգնակիակերտ հետևյալ վերջավորությունները՝ ք, ց, ս, ն. գրանցից ց-ն սեռական, տրական և բացառական հոլովների հոգնակին է, ս-ն՝ հայցական հոլովի, ն-ն՝ բայերի նրբորդ ղեմքի, իսկ ք-ն՝ գոյական անունների ուղղական ու գործիական հոլովների ու բայերի բոլոր ժամանակների առաջին և երկրորդ ղեմքերի հոգնակին, Գրաբարում եղել են նաև հոգնակի այլ վերջավորություններ, բայց գրանք բարբառներից գրական լեզվին անցած այն հոգնակիների վերջին ֆուրգերն են, որոնք հետագայում կորել, գործածությունից դուրս են ընկել, կամ էլ փոխել են իրենց ֆունկցիան: Գրաբարի հոգնակի վերջավորություններից ք-ն, ց-ն և ս-ն մեր էրայից մեկերիկու դար առաջ արդեն կայունացած և ամբողջ ժողովրդին հասկանալի էին: Այդ վերջավորություններից ք-ն այնքան բնորոշ է եղել հայոց լեզվին, որ նույնիսկ օտարները գիտակցել են, և հայերեն բառեր կամ տեղանուններ հիշատակելիս՝ հայերեն ք-ն փոխարինել են իրենց մայրենի լեզվի համապատասխան հոգնակի մասնիկներով:

Այդ հարցը պարզելու համար արժեքավոր նյութ է տալիս առաջին դարի (նախքան մեր էրան) խոշորագույն աշխարհագիր Ստրաբոնը՝ Նաիր արժեքավոր աշխատության մեջ շատ հաճախ է առիթ ունենում խոսելու հայերի, Հայաստանի և Հայկական բարձրամակարդում ապրած այլ ժողովուրդների մասին, և ամեն տեղամ երբ հիշատակում է հայերեն այնպիսի տեղանուններ և այլ բառեր, որոնք հոգնակի ք վերջավորություն ունեն, նույնությամբ չի բերում իր գրքում. մի շարք անգամ նա հիշատակում է իսկապես, Մովսիս, Սաննիս, Գեղե, Գուգարե, Եկեղիք, Աղվանք և շատ այլ տեղանուններ, որոնց ք- հոգնակի վերջավորությունը թարգմանվում է հունարեն համապատասխան հոգնակիներով (αί, οι): Այդ նշանակում է, որ հայերեն ք հոգնակին այնքան ընդհանրացած էր, որ մեր էրայից առաջ գիտակցել են նույնիսկ օտարները, այնպես նրանք այն չէին թարգմանի իրենց մայրենի լեզվին հատուկ հոգնակիներով:

Նույն Ստրաբոնը հայերեն տեղանուններում պահպանված այլ հոգնակի վերջավորություններ իր ժամանակ բավականաչափ տարածված և հայերենին հատուկ չլինելու պատճառով՝ չի թարգմանում: Այդ մենք տեսնում ենք հետևյալ տեղանուններում. Գուգարե բառը, ինչպես նշել է Մոսր, երկու հոգնակի վերջավորություն ունի՝ ար և ք. ար-ը մեր էրայից առաջ արդեն կորցրել էր իր իմաստը և ձուլվել բառին, այդ պատճառով էլ հայերը ավելացնում են բառին նոր հոգնակի վերջավորություն՝ ք-ն, որը հասկանում է Ստրաբոնը և թարգմանում է, իսկ ար-ը չի ըմբռնում և բառի հիմնական մասն է համարում, հետևաբար՝ չի թարգմանում: Գործում ենք, որ հին Հայաստանի Գորդիեննե, Արաբսեննե գավառների անվան մեջ ենն (են) հոգնակի վերջավորություն է, բայց Ստրաբոնի ժամանակ արդեն կորցրած իր հոգնակի իմաստը, որի համար էլ Ստրաբոնը այդ բառերը պահում է նույնությամբ՝ Γορδωνηνη, Ἀραβσεννη ձևերով, որով իմացվում է, որ նա չի գիտակցում այդ հոգնակի վերջավորությունը: Այդպես է վարվում Ստրաբոնը նաև այլ տեղանունների նկատմամբ:

Հայոց լեզվում մինչև այժմ էլ գործածվող և շատ հին ծագում ունեցող բազմաթիվ տեղանուններ իրենց կազմությամբ ցույց են տալիս, որ

հայերենի իրողությունները դարեր առաջ ընդհանրացած ու ժողովրդի մեծ մասին հասկանալի են եղել:

Այդ տեղանունները ուշադրալ են նրանով, որ նախադաս որոշիչներով ու հատկացուցիչներով են կազմված, թեև շատ հնուց են դալիս. այդ տեղանուններից են՝ Կաթավարերդ, Ձորարերդ, դաստակերտ, Մարակերտ, Շամիրամակերտ, Տիգրանակերտ, Ազնվաձոր, Հալիձոր, Կիշապաձոր, Շակաշեն, Շամիրամաշեն, Արքունաշեն, Արադածոտն, Մասյացոտն, Իադաոինձ, Տիրաոին, Արշակավան, Զսրեհավան և այլն: Այդ բարդ բառերի բերդ, շեն, ավան, ափնճ, ձոր եղբերը իրենց ծագմամբ կապվում են Հայկական բարձրավանդակում ապրած հնադույն՝ ուրարտացիներին, իսկներին և այլ ժողովուրդների լեզուներին հետ և հայ էթնիկական լեզվի մեջ են մտել որպես նրա բաղկացուցիչ տարրեր: Այն բոլոր հնդեվրոպական, իսկ կելտեր իրանական ծագում ունեն. սակայն այնքան ուժեղ են ենթարկվել մեր լեզվի ազդեցությանը, որ հայերեն էին դարձել մեր էրայից նույնիսկ մի քանի դար առաջ: Այդ բարդությունների մեջ նկատվում են որոշ օրինաչափություններ, որոնք հատուկ են հայերենին և քանի որ նույն ձևով հիշատակվում են օտար աղբյուրներում, վկայում են հայերենի մշակվածության մասին: Մակայն այդ բոլորը միայն թեթևակի և լրացուցիչ միաստեր են: Մեր գրաբար լեզվում պահպանված են մի շարք այլ իրողություններ, որոնք իրենց բովանդակությամբ ու ձևով առնվազն հինգ-վեց դարի հնուց թյուն ունեն: Այդ իրողություններից առաջին հերթին նկատողության արժանի են դրաբարի բազմաթիվ ոճերն ու հեթանոսական շրջանում ձևավորված ժողովրդական երգերն ու ասացվածքները:

Դրիստոնեությունը հայկական հին մշակույթը օրենքից դուրս հայտաբերեց և հրի ու սրի միջոցով աշխատեց ոչնչացնել այն ամենը, ինչ որ հեթանոսական շրջանի կուլտուրան ու սովորություններն էին հիշեցնում: Բայց չկարողացավ իսպառ արմատախիլ անել հայ ժողովրդի արյան ու կենցաղի մեջ մտած հավատալիքներն ու սովորությունները, որի հետևանքով շատերը «դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն ընդ չքնոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով: Եւ դիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանց և նմին հաւատացեալք, և ի նոյն անապագորդեալք»: որոնք ռոշ զխրատ իմաստութեան լսէին և ոչ առաջնորդացն ասելոյ զաստուծոյ պատգամսն անսացեալք հնազանդէին» և «դրանս սուրբս արհամարհէին» (Բյուզ. Պատմ. դպ. III, գլ. ԺԷ):

Սակայն ոչ միայն ժողովուրդը, այլև իշխող խավերից շատերը չէին մոռացել հեթանոսական սովորությունները և հաճախ, ինչպես նշում է Նիդշեն, երկարում էին «նուագս ուրախութեան մաշելով զերկարութիւն գիշերացն յերգս արեցութեան և ի կաքաւս լկտութեան», քաղցրացնում էին «ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս» (Երրորդ յեղանակ): Հինգերորդ դարի մեր մատենագիրները մեզ ավանդել են հեթանոսական սովորություններն արտահայտող և քրիստոնեությունից առաջ ձևավորված մի շարք առասպելներ ու ասացվածքներ, որոնցից շատերը, իտրենացու հավաստիացմամբ, վերցված են ընտրողաբար, «որոնք զհշմարտութիւն իրացն ալլարանաբար յինքեանս ունին իմպուցեալ»: Ենթիկ Կողբացին քննադատում ժողովրդի մեջ հնուց արմատացած և լեզվական ձևավորում վաղուց ստա-

ցած սովորություններ, որոնց մնացորդներին մինչև այժմ էլ մենք կարող ենք հանդիպել մեր ժողովրդի լայն զանգվածների մեջ: Սրանց զուգընթաց նա դորժածում է այնպիսի ոճեր, որոնք այնուամենայնիվ հինգերորդ դարից առաջ են լեզվական ձևավորում: Ետացել և կապվում են հնագույն մտածողության հետ: Սակայն միայն Եզնիկը չէ, որ հավաքել ու գործածել է ժողովրդական լեզվամտածողությամբ պայմանավորված, կամ հնագույն սովորությունների հետ առնչված դարձվածքները: Մովսես Խորենացին, Փավստոս Բյուզանդը, Աղաթանգեղոսը և հինգերորդ դարի մեր թարգմանիչներն ու մյուս մատենագիրները նույնպես գործածել են բազմաթիվ ոճեր, որոնք դարերի հնության կնիքն են կրում: «յարևէ արկանել», «արև կրել», «յարկն անկանել», «օր ընդ օր», «մատն առնել», «միտս դնել», «սահման քաջաց» գէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի», «քո Շարայի որկորն է, մեր Շիրակայ ամբարք չեն», «աւաղ փառացս անցաւորի», «ժառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տալ լսել նմա» և շատ այլ ասացվածքներ պատկանելի անցյալ ունենւ: Նրանցից մի մասի հնությունը երևում է նաև իրենց ձևից: հայտնի է, որ առածներ, ասացվածքներ, հանելուկներ սովորաբար հորինվում են հանգերով, որոնց հետևանքով ալիքի ուշ են մոռացվում: Ինչպես՝ զող՝ սիրտը զող, հաց ու պանիր՝ կեր ու բա՛նիր, որտեղ հաց՝ այնտեղ կաց և այլն: Այդ ձևով են կազմված նաև դրաբարի շատ ոճեր ու ասացվածքներ, որոնք չէին կարող կարճ ժամանակում ստանալ այն իմաստը, որն արտահայտել են 5-րդ դարում և նրանից հետո: Գրաբարի մշակվածությունն ու հնությունը երևում է նաև ժողովրդական այն հիմքերից և վիպերգերից, որոնց մնացորդները դրի են առել 5-րդ դարի մեր մատենագիրները: Այդ երգերից են՝ Վահագնին նվիրված երգը, որը, ինչպես նշել է Մ. Արևիյանը, «խորին հնությունից է գալիս և թեպետ ուշ ժամանակում դրի առնված, ոչ միայն իր բովանդակությամբ, այլև ձևով կրում է նախնական բանաստեղծության դրոշմը» (Հայոց հին գրակ. պատմություն, էջ 68): Մ. Խորենացին գրի առնելով այդ երգը, ասում է, «Ջաշս երգելով ոմանց բամբուամբ, լուաք իսկ ականջօք մեքովք» (Պատմություն հայոց, գիրք Ա, դլ. 1Ա): Այնուհետև շարադրում է երգի այլ հատվածները՝ բովանդակությամբ, համեմատում դրանք Հերակլեսի մասին եղած պատմությունների հետ և մեկնաբանում հունական միջոցառման տվյալներով: Մ. Խորենացու գրքում մենք հանդիպում ենք նաև այլ երգերի և առասպելների մնացորդների: Գրանցից են հայոց Արտաշես թագավորի մասին հորինված երգի դրի առնված մասը, որի բովանդակությունը հետեւյալն է. հայոց զորքերը ձերբակալելով արմատց արքայի որդուն՝ Արտաշեսի մոտ են բերում: Արանաց թագավորը հաշտություն է խնդրում և խոստանում է այլևս չասպատակել հայոց աշխարհը պայմանով, որ Արտաշեսն ազատի յուր որդուն:

Արտաշեսը չի կատարում արանաց թագավորի խնդիրը, այն ժամանակ պատանու քույրը զալիս է դևտի մոտ և թարգմանիչների միջոցով խընդրում է Արտաշեսին ազատել իր եղբորը, որովհետև

Վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց

Ջայլոց դիւցազանց զարմից

Բառնալ գկենդանութիւն,

կամ ծառայեցուցանել

Եւ ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յառիանական
Ի մէջ երկոցունց աղգաց քաջաց հաստատել:

Արտաշէսը լսելով կռւսի այս իմաստուն խոսքերը, սիրահարվում է նրան և կանչում իր դայակ Սմբատին, հայանում իր ցանկությունը: Սրմ-
րատը մարդ է ուղարկում ալանների թաղավորի մոտ խնամախոսության,
բայց նա պատասխանում է.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
Հաղարս ի հաղարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ աչազեղոյ կոյս օրիորդիս Ալանաց:

Արտաշէսը բյուրեր և հաղարներ չի տալիս Քընդ աչազեղոյ կոյս սրի-
որդին Ալանաց», այլ փախցնում է նրան: Հայ ժողովուրդը, խորենացու
ասելով, Արտաշէսի այդ սխրագործության մասին երգեր է հորինում, ու
վիպասանները երգելով ուտում են.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան զեղեցիկ
Եւ հանեալ զոսկէօղ շիկափով պարանն,
Եւ անցեալ օրպէս զարծուի սրաթև բնդ զետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափով պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր...:

Պորենացին լսելով այս երգը և անփութիս զրի առնելով՝ ենթադրում
է, որ ճիշտ չէ Քրանդի պատուեալ է առ Ալանս մօրթ կարմիր. լաքայ շատ
և ոսկի բաղում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթիկի:
Այս է (ևրդս) ոսկէօղ շիկափով պարանն: Եթե Պորենացին բառացի մեջ-
բերումներ չկատարեր, բացատրություններ տալու կարիք չէր զգա:

Հայ ժողովուրդը Արտաշէսի մասին այլ երգեր ու առասպելներ էլ է հո-
րինել. Պորենացին այդ բոլորը զրի չի առել, բայց ամբողջութեամբ մո-
ռացության չի տվել և Արտաշէսի հետ կապված զեպքերի պատմությունը
զրելիս, հաճախ վկայակոչում է այդ երգերն ու առասպելները՝ իր տեսա-
կետները ամփոփելով պարզելու կամ ապացուցելու համար:

Սակայն ոչ միայն Արտաշէսին, այլև Վարդգեսին, Արտավազդին
նվիրված և հեթանոսական սովորություններ արտահայտող երգերի պատա-
ռիկներ ու առասպելներ է զրի առել Մ. Պորենացին: Այդ երգերի ու վի-
պերգությունների մեծ մասը, ինչպես նշվեց վերևում, զրի են առնված անփո-
փոխ և, թեպետ իրենց լեզվով շատ քիչ են զանազանվում 5-րդ դարում զրի
առնված մեր լեզվից, բայց նրանց արմատները ձգվում են մինչև հայ
ժողովրդի նախապատմական շրջանը:

Վահագնի երգը, օրինակի համար, իր բովանդակությամբ, ինչպես
ցույց են տվել շատ բանասերներ, կապվում է հայ ժողովրդի հնազույն
հասկացությունների ու բմբունութիւնների հետ: Վահագնի ծնունդի ժամանակ
երկինքն ու երկիրը երկուսն էլ են բռնվում, երկունքը բռնում է նաև կարմիր
և դեպի, որի փոխից ծուխն ու բոց էին ելնում և այդ տարերքից, հրից ու
բոցից ծնվում է Վահագնը, որը հուր հեր ունէր, բայց ունէր մօրուսն և

աչքերը արեգակներ էին: Այդ երգը կապվում է հայ ժողովրդի այն շրջանի ըմբռնումների հետ, երբ նրա համար արեւը գերագույն աստվածություն էր. իսկ այդ կոսմոգոնիական մտածողության շրջանն էր: Սակայն երգի հնունդները երևում է նաև իր ձևից ու չափից: Այդ երգի չափի առանձնահատկություններից մեկը բառերի կրկնությունն է, որը հնուց է գալիս և հատուկ է հայոց լեզվին. երգում կան նաև նախադասություններ, որոնք, ինչպես երևում է Հայաստանի բարդ տեղանուններից և մեր բարբառներում պահպանված լեզվական իրողություններից, հայոց լեզվում ընդհանուր պոեմատիկություն են ստացել մեր էրայից շատ առաջ: Այդ բոլորին ավելանում են արևի, արեգակի ու կրակի հետ կապված ոճերն ու դարձվածքները, որոնք այնքան ուժեղ են եղել, որ նույնիսկ քրիստոնեությունը չի կարողացել ազատագրվել դրանց ներդրումությունից:

Հայտնի է, որ «արեգակն արդար» կամ «արեգակն արդարութեան» հնագույն կապակցություններով կոչել են աստծուն, որի այդ հորջորջումը, չնայած պատկանելի անցյալին, պահպանվել է նաև մեր իմպերիությունից հետո և հասել է մինչև մեր ժամանակները: Արև աստծու հետ կապված ոճերը լայն տարածված են եղել ինչպես վրարարում, նույնպես և մեր ժողովրդական լեզուներում. «արեգակնարար ծագեմք ամենայն ումեր զպարզեւս», «յարեւ որկանէ՞, արև կրել», «յերդնու յարեն», ինչպես նաև՝ «արեղ սեանա», «արեամեռ», «արեղ կանաչ», «արեղ վկա» և բաղմաթիվ այլ ոճերի ու դարձվածքների հնագույն ծագումը այժմ պարզ է բոլորին: Դրանց հնութունը երևում է նաև այն բանից, որ Հայկական բարձրամշակույթում հայերից առաջ ապրած ժողովուրդների լեզուներում նույնպես պահպանված են նման ոճեր: Ուրարտերենում դատ, դատարան, դատաստան բառերը անցնել են «արև» (ardni) հասկացությունից: ինքնի արև աստվածը արդար դատաստան է կատարում ամեն օր: Բարեխաղիների արև աստվածը՝ Շամաշը գերադույն դատավորն է և այլն: Հայերեն արդար բառը ավելի շուտ կապվում է ուրարտական ardi, և ոչ հնդեվրոպական ar բառի հետ, որովհետև հնչյունական և իմաստային տեսակետից ուրարտերենը ավելի է մոտ հայերենին:

Այդ ոճերի ու դարձվածքների անալոգիայով կազմված դարձվածքներ կան նաև շատ այլ հին լեզուներում: Այդ նշանակում է, որ զարգացման միևնույն աստիճանում ապրող տարբեր ժողովուրդներ, միմյանցից միանգամայն անկախ, մշակել են լեզվական շատ ընդհանուր հասկացություններ՝ լեզվական հատուկ ձև տալով դրանց մեր էրայից շատ ու շատ առաջ: Այդպես են նաև հայերեն այն ոճերից շատերը, որոնք արևի հետ են շաղկապված:

Հայկական բարձրամշակույթում հայերից առաջ ապրած ժողովուրդների լեզվից և սովորություններից շատ բան են ժառանգել հայերը, սակայն այդ ժողովուրդների սովորությունների, լեզուների մասին ազոտ տեղեկություններ են հասել մեզ. բայց նույնիսկ այդ սուղ փաստերի մեջ չիման բաղմաթիվ կետեր ենք նկատում: Ուրարտերենում շատ սովորական է «ծառայեցրի, հարկի տակ գցեցի» ոճը¹. որին նման ոճ մենք նկատում ենք նաև Արտաշեսին նվիրված երգի մեջ: Այսինքն օրիորդը ասում է Արտաշեսին՝ «Ոչ է

¹ Տես Փո. Ասիականցյան—«Մի քանի հին ոճեր և արտահայտություններ ուրարտական արձանագրությունների մեջ». ՍՍՌՄ ԳԱ Հայկ. Ժիդիալի տեղեկագիր, 1913 թ.:

օրէն ղիւցազանց՝ զայլոց ղիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանել և ի ստրկաց կարգի պահելը, Երբ որ Քորենացիւն շարադրել է իր Պատմութիւնը, «ծառայել» բառը իր սկզբնական իմաստը կորցրել էր, որովհետև Հայաստանում վաղուց էին վերացել ստրկատիրական հարաբերութիւնները, հետևաբար՝ չէին կարող ստեղծվել այդ հարաբերութիւններն արտահայտող նոր բառակազմութիւններ: Այդ երևում է նաև Քորենացու բացատրութիւնից, որին ղիմում է նա՝ հաստատ իմանալով, որ իր ընթերցողների մեծ մասը չի հասկանա այդ դարձվածքը, եթէ չբացատրվի: Հին սովորութիւնների հետ են կապված և պատկանելի անցյալ ունեն նաև «բառնալ զկենդանութիւն», «կռել կոփել դուռն» ոճերը, որոնք այդ հին իմաստով մինչև այժմ էլ պահպանված են մեր ժողովրդի մէջ, միայն լեզվական որոշ մշակման ենթարկվելով: Քորենացին դարձվածքները զրի է առել աշնպես, ինչպես լսել է գուսաններից, բայց այստեղ ևս նա, իր սովորութեան համաձայն, բացատրել է այդ բառակազմութիւնները, որից իմանում ենք, որ «կռել կոփել զդուռն» նշանակում է «մեկից աղջիկ ուզել», իսկ «բառնալ զկենդանութիւն»՝ «կյանքից զրկել», «սպանել»:

Այդ երգերում ու առասպելներում պահպանված բոլոր այն իրողութիւնները, որոնք կապված են ժողովրդական լեզվամտածողութեան հետ, ավելի չին են և ավելի վաղ են լեզվական ձևավորում ստացել: Այդ տեսակետից հետաքրքրական են վիպական երգերի տաղաչափական առանձնահատկութիւններից մի քանիսը. այդ երգերը հորինված են պարզոտնյա խառն ոտանավորներով, որոնք հատուկ են մեր ժողովրդական բոլոր ստեղծագործութիւններին. աշնպես ևն հորինված «Սասունցի Դավիթ» էպոսի համարյա բոլոր վարիանտները, «Մոկաց Միլղան» և ժողովրդական այլ ստեղծագործութիւններ: Հատկանշական է, որ մեր բոլոր այն հին գրողները, որոնք ուզեցել են եկեղեցական երգերից տարբերվող ոտանավորներ կամ երգեր հորինել, իրենց ստեղծագործութիւնները շարադրել են պարզոտնյա խառն ոտանավորներով: Այդպես է վարվում միջին դարի խոշորագույն հայ գրող Գ. Նարեկացին, որն իր ստղերը հաճախ համեմատ է հեթանոսական շրջանի սովորութիւնների հետ կապված դարձվածքներով ու հասկացողութիւններով:

Գրաբարում, ինչպես նաև վիպական երգերում, պահպանված են որոշ բայերի ավելադրութիւններ, որոնք ավելի շատ տարածված են մեր բարբառներում: Եկն պատանեցաւ այնմիկ, եկն արա զոր ասեմս քեզ, եկն հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց, մա անց զմաց և շինեաց ի մեք մարաց զմարակերտ, եկեալ մստեալ գճրեշ բլրով, կռել կռփել զգուռն Երուսանդայ արքայի և այլն ոճերի հնագույն լինելու հանգամանքը կասկածանքի տեղիք չի տալիս: Հնագույն մտածողութեան արտահայտութիւններ են նաև ուղղականի և հայցականի շփոթումները և միևնույն ձևով գործածելը:

Արտաշեսին նվիրված երգի մէջ կարդում ենք.

Եւ ձգեալ զոսկէտղ շիկափով պարանն,
Ընկէց ի մեզ՝ օրիորդին Ալանաց.
Եւ շատ ցաւեցոյց զմեզ՝ փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Այդ անկանոնությունները որոշ բանասերներ համարել են սխալ, գրաբարի օրինաչափությունները չիմացող գրիչների անտեղեկություն հետևանք. սակայն վաղուց ապացուցված է, որ դրանք սխալներ չեն, այլ հայոց բարբառներին հատուկ իրողություններ. որոնք զգալի քանակությամբ պահպանվել են նաև գրաբարում. Հինգերորդ դարի մեր բոլոր մատենագիրների ստեղծագործություններում կան հոգնակի հայցականի և ուղղականի միաձև գործածության դեպքեր. ահա մի քանի օրինակ հայցականը ուղղականի ձևով՝ «ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր», «ի վանքն նստին», «չամարէր թշնամանս զօրքն» և այլն. Ուղղականը գործածված հայցականի ձևով՝ «իբս նորոգս ցուցաւ», «հարկս ամենայն աշխարհիս առ իս են», «մի և մի երկուս են» և այլն:

Նշված երգերի դրի առնված պատռուկների մեջ պահպանված են լեզվական մի շարք այլ իրողություններ. Ինչպես՝ մեզ կապով ներգոյական հոլովի կազմումը (ի մէջ մարաց, ի մէջ երկոցունց ազգաց), նախադաս որոշիչներ և հատկացուցիչներ և այլն. որոնք նույնպես խոսում են դրանց հնությունը:

Սակայն, չնայած այդ բոլոր առանձնահատկություններին, Մ. Քոբե-նացու և մեր այլ մատենագիրների հիշատակած ժողովրդական երգերն ու առասպելները՝ իրենց լեզվով հիմնականում չեն տարբերվում 5-րդ դարում դրի առնված գրաբարից, թեև դրանք 5-րդ դարից մի քանի դար առաջ են հորինվել. Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ գրաբարը ավելի վաղ է կազմավորվել ու վերաբրառային լեզու դարձել:

Այդ կարծիքի օգտին են խոսում նաև մի շարք այլ ոճեր, որոնք գործածվել են պաշտոնական գրադրությունների մեջ և հարադատությամբ պահպանվել են 5-րդ դարի մեր բոլոր մատենագիրների ստեղծագործություններում՝ մինչև նրան ձևով և իմաստով. Ահա դրանցից մի քանիսը. «բազմասցի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ», «դուք ողջ լերուք և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ», «հայոց մեծաց ողջոյն շատ», «բազմասցի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց», «ողջ լեր ամենայն յադիութեամբ», «տեառն իմում խնդալ», «ծնունդ ինքնակայ», «ճակատադրեալ անմահութիւն», «ողջոյն շատ շնորհեմ ձեզ», «հասցէ այցելութիւն ի փառաց թագաց և ի քաջ նախնեաց», «ողջ լիջիք և մեք մեզէն ողջ եմք ամենայն իրօք զօրօր տերութեան օրինօք», «Ձեզ ամենալրիւքն ամենաբարիքն ի դիցն բազմասցին» և այլն:

Այս ոճերը հետաքրքրական են նաև իրենց հասարակական ֆունկցիայով. բոլոր այն դեպքերում, երբ թագավորը կամ իշխանն է գրում իր ստորագրյալներին, շատ զուսպ է ածականներ գործածելու մեջ, իսկ երբ ստորագրյալն է գրում՝ ողողում է իր նաժակը կամ դիմումը բազմաթիվ ածականներով, թագավորին կամ իշխանին բարձակից արեգական, ճակատագրեալ անմահութիւն և այլ տիտղոսներով անվանակոչում:

Այդ բոլոր փաստերը ցույց են տալիս, որ հայոց հին լեզուն՝ գրաբարը դեռևս մեր էրայից առաջ հատուկ մշակման է ենթարկվել ու հղկվելով կուլտուրական լեզվի աստիճանի է հասել. Այդ լեզվի մշակման ու տարածման մեջ խոշորագույն դեր են կատարել զուսանները, որոնք հայ շինականին անմիջականորեն կապել են իշխանի և թագավորական շրջանների հետ. նրանք պալատն են տարել աշխատավոր ժողովրդի տրամադրու-

սոցիալական շերտավորումը երկրի ներսում, Հայաստանում, առևտրի ծաղկումն ու հելլենիստական քաղաքակրթության ազդեցությունը արագացնում են նաև հայոց լեզվի բնդհանրացման ու մշակման պրոցեսը, որը Տիգրան Բ-ի ժամանակ իր կատարյալ ծախալումն է ստանում։ Տիգրան Բ-ի ժամանակ կազմակերպված պայքար է սկսվում իրանիզմի դեմ, հելլենիզմը թափանցում է նույնիսկ հայ ժողովրդի կենցաղի ու կրոնական սովորույթներին։ Տիգրան Բ-ը ոչ միայն մտահոգվում է հայկական հզոր պետություն ստեղծելու, երկիրը վերանորոգելու, կուլտուրական մակարդակը բարձրացնելու հարցերով, այլև նա հետևողական քաղաքականություն է տանում նաև գրականությունն ու լեզուն զարգացնելու ուղղությամբ։ Տիգրան Բ-ի և Միհրդատի հզոր տիրապետությունը հելլենիստական քաղաքակրթությունը զարգացման նոր աստիճանի հասով Առաջավոր Ասիայում։ Սակայն Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքները, ինչպես ճիշտ կերպով նշում է Հ. Մանանդյանը, վերջ դրին այդ առաջադիմական գործունեությանը՝ Հռոմայինցիները ոչ միայն ամռայացրին և ավերակների կույտ դարձրին Պոնտոսի և հարավային Հայաստանի հարևան ու փարթևած քաղաքներն ու գյուղերը, այլև, մշտապես հաստատվելով Ասորիքում՝ հետզհետե առաջ բերեցին ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում, հելլենիստական քաղաքականությունից, ինչպես նաև հետադիմություն՝ Սակայն նրանք չկատարացան վերացնել հայ ժողովրդի խոշորագույն ստեղծագործությունը՝ հայոց լեզուն, որը Տիգրան Բ-ի ժամանակ ստեղծված նպաստավոր պայմանների հետևանքով՝ ավելի զարդացավ, մշակվեց ու վեր բարձրանալով հայոց բազմաթիվ բարբառներից՝ դարձավ պաշտոնական, պետական այնպիսի մի լեզու, որը միանգամայն բավարարում էր Տիգրան Բ-ի ստեղծած հզոր պետության պահանջները։ Այդ լեզուն հիմնականում ձևավորվելով Տիգրան Բ-ի տիրապետության շրջանում՝ չնայած զարգացման միևնույն աստիճանի վրա, հետագայում ավելի ու ավելի սկսեց մշակվել ու զարդանալ, հասնելով այնպիսի գաղափարական, ինչպիսին մենք տեսնում ենք մեր էրայի հինգերորդ դարում։

Մեր լեզվի մշակման ու զարգացման բնագավառում նշված գործոններից բացի, մեծ դեր է կատարել նաև հայոց բանակը, որը տարբեր շրջաններում տարբեր, բայց միշտ էլ զգալի կոնստիդենտ է ունեցել։ Տիգրան Երկրորդը, օրինակի համար, ունեցել է մի քանի տասնյակ հազարանոց բանակ, որի պերակշռող մեծամասնությունը հայեր են եղել։ Նրանք հավաքված լինելով Հայաստանի զանազան շրջաններից ու գավառներից՝ բնականաբար, ունեցել են առանձին բարբառներ, որոնք բանական հազարյակցության միջոց լինել չէին կարող. ուրեմն՝ նրանք բանակում պետք է խոսեին այնպիսի մի ընդհանուր լեզվով, որը բարբառային չլինելով հանդերձ՝ հասկանալի պետք է լիներ բոլոր բարբառախոս հայերին. իսկ այդպիսի լեզու կարող էր լինել միայն հայերեն բարբառների հիման վրա կազմավորված, բարբառային մակարդակից վեր բարձրացած ու ազգաբնակչության մեջ լայն ընդունելություն գտած լեզուն։ Այդ լեզուն, ինչպես ցույց են տալիս հին հայերենի մեջ պահպանված լեզվական հնագույն իրողությունները և նրա զարգացման այն մակարդակը, որը մեզ հայտնի է 5-րդ

¹ Տե՛ս Հ. Մանանդյանի «Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. Ա, էջ 243.

դարի մեր մատենագիրների ստեղծագործություններից, եղել է գրաբարը՝ Տիգրանից հետո նույնպես հայոց բանակի թիվը բավականաչափ զգալի է եղել։ Տիգրան Բ-ի որդի Արաավազդ Բ-ը, Պլուտարքոսի ասելով, 6000 հեծելազորով գալով Ասորիք, Կրասսոսի մոտ, խոստանում է որպես օգնություն նրան տալ 10 հազար զրահավոր հեծելազոր և 30 հազար հետեազոր։ Հայոց թագավորը, եթե այդպիսի մեծ թվով մարտիկներ կարող էր առնումեական զորավարին որպես օգնական ուժ, առնվազն նրանից երկուերեք անգամ ավելի պետք է պահեր իր երկրի ապահովության համար։ Այստեղ էլ, ինչպես երևում է բերված թվերից, հայոց բանակը բազմաթիվ է։ Այս բոլորը ինքնըստինքյան խոսում են այն խոշոր դերի մասին, որ խաղացել է հայոց բանակը մեր լեզվի մշակման ու տարածման բնագավառում։ Եղել են մարդիկ, որոնք՝ կարծել են, թե 5-րդ դարից առաջ հայերը որպես պաշտոնական լեզու գործածել են հունարենը, ասորերենը կամ պարսկերենը։ սակայն մեր ժողովրդի դարավոր պատմությունը այդ անսակեռի դեմ է խոսում։ Հայ ժողովուրդը և նրա իշխանները, չնչին բացառությամբ, միշտ ինքնուրույնության են ձգտել, օտար տիրապետությանից ընդմիշտ ազատվելու համար են պայքարել։ Բակ այդ պայքարի մեջ հայ ժողովրդի հիմնական հենարաններից մեկը, եթե ոչ ամենազիսավորը, եղել է հայոց լեզուն։ Հայ ժողովուրդը ճանաչել է ինքն իրեն իր լեզվով և կուլտուրայով, պահպանել է իր ինքնությունը և չի ձուլվել իրենից տնտեսապես և քաղաքականապես ուժեղ ժողովուրդներին, որովհետև չի մոռացել իր լեզուն ու կուլտուրան և իր գոյության հավերժությունը տեսել է իր լեզվի մեջ։ այդ պատճառով էլ պահպանել է յուր լեզուն իր աչքի լույսի պես, և թույլ չի տվել, որ նա անջատվի ու ձուլվի որևէ այլ լեզվի, որքան էլ աննպաստ պայմաններում է դնվել։

Այս բոլորից հետևում է, որ գրաբարը իր կազմավորման շրջանում ժողովրդական լեզուներին, մի շարք բարբառներին շատ մոտ է եղել իր բոլոր իրողություններով, բայց հետագայում, երբ Հայաստանում ստեղծվել է ուժեղ պետականություն, այդ լեզուն մշակվել ու հղկվել է հայ ֆեոդալական հարաբերությունների հետ կապված ինտելիգենցիայի, քուրմերի և գուսանների միջոցով և հեռացել է իր մայր աղբյուրից այնքան, որ 5-րդ դարում արդեն ընդհանուր խոսակցական լեզու չէր, թեև այդ լեզուն հասկանալի էր հայ ժողովրդի բոլոր հատվածներին։ 5-րդ դարում, ինչպես նաև դրանից դեռ շատ առաջ, նա արդեն պաշտոնական, պետական լեզու էր։ «Հայ քրիստոնեական գրականության ծագումից առաջ էլ,—ասում է Մառը,—այդ նույն լեզուն, իհարկե, գանձում էր զարգացման հատուկ ստադիայում։ Կարելի է ամենայն հավանականությամբ ասել, որ նա արդեն այն ժամանակ կարողացել էր դուրս գալ բարբառի նախնական դրությունից և կուլտուրական լեզվի աստիճանի բարձրանալ, որովհետև ստիպված ենք ընդգծել, որ հեթանոսական կուլտուրա-քաղաքական լեզվի և ապա նորադարձ Հայաստանի լեզվի միջև սերտ կապ է եղել»¹։

Հայոց գրական լեզուն՝ գրաբարը ձևավորվելով հայկական պետականության առաջացման հետ, վերջնականապես կայունանում և զարգացման նոր աստիճանի է բարձրանում Տիգրան Բ-ի տիրապետության ժամանակ։

¹ Н. Марр, Грамматика древнеармянского языка, стр. XXX.

Այդ ժամանակվանից նա ղառնում է հայ պետականության պաշտոնական լեզու, որը սկզբնական շրջանում ամբողջապես հասկանալի է եղել հայ ժողովրդի բոլոր զանգվածներին։ Սակայն մեր էրայի 7—8-րդ դարերից սկսած նա անհասկանալի է դառնում ժողովրդական լայն խավերին, նույնիսկ ինտելիգենցիայի մեծամասնությանը, թեև շարունակում է պաշտպանել իր զրական ու պաշտոնական լեզվի ֆունկցիան մինչև 19-րդ դարի առաջին կեսը։ Միջին դարերում որոշ ժամանակ, զլխավորապես Ռուբինյան թագավորության մեջ՝ կիրկիտյում, զրական պաշտոնական լեզու է դառնում միջին հայերենը։ Բայց երբ վերջ է տրվում Ռուբինյան հարստությանը, զրարարը նորից զրավում է իշխող բարձունքները, մինչև որ մեր ազգային լեզուն՝ ժամանակակից հայերենը, անթիվ խոչընդոտներ հաղթահարելով՝ փոխարինում է իր պատմական խոչորագույն դերը կատարած զրարարին։ Հին հայերենը՝ զրարարը մեր կուլտուրայի պատմության մեջ կմնա որպես մի անզուգական ստեղծագործություն, հայ ժողովրդի կուլտուրայի խոչորագույն նվաճում, որի իրողությունները միշտ էլ պետք է օգտագործվեն ժամանակակից հայոց լեզվի հետագա մշակումն ու զարգացումը առաջ մղելու և մեր սոցիալիստական կուլտուրայի հարցերը հաշոգ լուծելու համար։

С. Казарян

Образование древнеармянского языка—грабара

Р Е З Ю М Е

1. Древнеармянский язык—грабар обрел свою письменность в V веке нашей эры. На этом языке дошли до нас все памятники древнеармянской христианской литературы и ряд произведений по истории, философии, естественным наукам, написанные в течение V и по XIX столетие.

2. Этот язык прошел долгий путь развития. До возникновения армянской христианской литературы он уже успел выйти из состояния дописьменного наречия и подняться на ступень культурного и развитого языка.

3. Как всякий развитой и культурный язык, так и древнеармянский язык, был связан с господствующим классом и разрабатывался среди политически-господствующего класса, превратившись в культурную изысканную речь двора, жрецов и местных владельцев древней Армении. Этот язык начал формироваться в связи с образованием армянского самостоятельного государства и окончательно стабилизировался и поднялся на новый уровень развития во время господства Тиграна II, когда создавалась армянская мощная империя.

4. При Тигране II, став общим государственным и, судя по некоторым фактам, уже прочным и развитым языком, а с 5-го века и письменным, он с некоторыми перебоями продолжал сохранять функции официального и письменного языка до XIX века, хотя, начи-

ная с V века, он уже был мало доступным и непонятным языком для широкого круга народных масс.

5. Факты, связывающие окончательное образование древнеармянского языка с господством Тиграна II, следующие:

а) Сохранение языковых фактов, свойственных грабару в иностранных источниках. Так, например, в произведениях Страбона и других летописцев переведено на греческий язык окончание множественного числа грабара *ϕ*, и это показывает, что означенное окончание во время Тиграна II было настолько распространено, что даже чужеземные летописцы осознали функцию этой морфемы.

б) В древнеармянском языке в своих древних формах сохранились многие слова, которые существовали при Тигране II, но к V веку уже исчезли. Этот факт показывает, что отмеченные слова были заимствованы до нашей эры и что в это время армянский язык выступает настолько развитым и разработанным, что он был в состоянии осваивать языковые факты, несвойственные родной речи.

в) Армянские летописцы V века дословно цитировали из песен и легенд, своим содержанием и формой хотя и связанных с идеологией языческого периода, но еще сохранявшихся среди масс армянского народа. Язык дошедших до нас отрывков этих песен и легенд очень мало отличается от древнеармянского языка, несмотря на то, что они сочинились задолго до нашей эры. Эти факты показывают, что грабар тоже образовался задолго до возникновения армянской христианской литературы.

г) В древнеармянском языке сохранены многочисленные обороты речи, фразы и идиомы, которые в большинстве связаны с первобытной или с господствующей идеологией и сформировались до нашей эры. Среди этих оборотов особенно значительны идиомы, выражающие понятия, связанные с феодальными отношениями, идиомы, которые по своему содержанию и форме сложились очень рано и показывают языковое совершенство и стройность грабара.

д) Древнеармянский язык - грабар вошел в историю армянской культуры как величайшее творение, как великое достижение, для полнейшего использования языковых фактов которого создавались благоприятные условия только после ряда долгих лет, когда армянский народ с помощью великого русского народа создал свое новое государство и ставит прочные основы развития и расцвета своего языка и культуры.